ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «07» հոկտեմբերի, 2016 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 48-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ «ՀԱՐԱՎԱՅԻՆ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ԵՊՀ - ՌԴ ՀԴՀ - 2016» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշման Հավելված 1-ի 12-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ ԵՄ

1. Կազմակերպել «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ԵՊՀ – ՌԴ ՀԴՀ – 2016» միջազգային մրցույթ:
2. Հաստատել մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելվածի:
3. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ Գ. Մելիքսեթյան)՝ ապահովել հրավերի փաթեթի զետեղումը կոմիտեի էլեկտրոնային կայքում:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
2016 թ. հոկտեմբերի 7-ի
թիվ 48-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ «ՀԱՐԱՎԱՅԻՆ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ԵՊՀ - ՌԴ ՀԴՀ - 2016» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ

Հ Ր Ա Վ Ե Ր

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե), «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) և Ռուսաստանի Դաշնության «Հարավային դաշնային համալասարան» բարձրագույն կրթության դաշնային պետական ինքնավար կրթական հաստատության (այսուհետ՝ ՀԴՀ) միջև 2016 թվականի ապրիլի 13-ին կնքված «Գիտատեխնիկական ու նորարարության բնագավառներում համագործակցության մասին» համաձայնագրի շրջանակներում Կոմիտեն, ԵՊՀ-ն և ՀԴՀ-ն (այսուհետ՝ Կողմեր), նպատակ ունենալով խթանել գիտական հետազոտությունների ոլորտում եռակողմ համագործակցությունը, հայտարարում են գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ԵՊՀ – ՌԴ ՀԴՀ – 2016» մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ)՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության հետևյալ մասնագիտություններով.

1. մաթեմատիկա,
2. ֆիզիկա,
3. քիմիա,
4. կենսաբանություն,
5. պատմություն:

Մրցույթի մասնակցության հայտերը (այսուհետ՝ Հայտ) ներկայացվում են ըստ Հավելված 1-ում բերված գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառների և մասնագիտությունների:

Մրցույթի արդյունքում Կոմիտեի և ՀԴՀ-ի կողմից կֆինանսավորվեն մինչև 5 հետազոտական նախագծեր: ԵՊՀ-ն ծրագրի ֆինանսական ծավալներից դուրս ֆինանսական աջակցություն կցուցաբերի Մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական ծրագրերի (այսուհետ՝ Ծրագիր) կատարողներին՝ ֆինանսավորելով յուրաքանչյուր ծրագրից ԵՊՀ մեկական մասնակցի ճանապարհածախսը Երևան-Դոնի Ռոստով-Երևան և ՀԴՀ մեկական մասնակցի երկու շաբաթվա կեցության ծախսը Երևանում:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ծրագիր ֆինանսավորումը Կոմիտեի կողմից իրականացվում է ՀՀ պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության «Միջազգային գիտական համագործակցություն» ենթածրագրի ֆինանսական միջոցների հաշվին:

1.2. Հայտը նախապատրաստվում է գիտահետազոտական և (կամ) գիտամանկավարժական խմբերի կողմից: Հայաստանյան խումբը (այսուհետ՝ Խումբ) պետք է բաղկացած լինի 3-4 անդամներից՝ Խմբի ղեկավար (այսուհետ՝ Ղեկավար) և կատարողներ (այսուհետ՝ Կատարողներ):

1.3. Ծրագրերի իրականացման ժամկետը 12 կամ 24 ամիս է:

1.4. Հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող Հայտ և այնուհետև՝ Ծրագրի իրականացման մասին Հաշվետվություն ներկայացնելու դեպքում Ղեկավարը պետք է գործի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթներին համապատասխան: Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերն իր իրավունքները պաշտպանելու նպատակով կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան:

1.5. Կոմիտեն իրավունք ունի Ծրագրի և վերջինիս հաշվետվության անոտացիաները հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

1.6. Ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները պետք է հրապարակվեն գիտական ամսագրերում: Հետազոտությունների արդյունքները հրապարակելիս անհրաժեշտ է նշել Կոմիտեի կողմից ստացած աջակցության մասին.

- Հետազոտությունն իրականացվել է «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ԵՊՀ – ՌԴ ՀԴՀ – 2016» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորվող №------- համատեղ գիտական ծրագրի շրջանակներում:

- Исследование выполнено при поддержке ГКН МОН РА МОН РА в рамках <<ГКН МОН – РА – ЕГУ – ЮФУ РФ - 2016>> международного конкурса совместного научного проекта №....

- The research is supported by the RA MES SCS, within the frames of the «RA MES SCS – YSU – RF SFU» international call for joint project №....

1.7. Հայտը չի քննարկվում, եթե վերջին 3 (երեք) տարում Ղեկավարի կողմից Կոմիտեի աջակցությամբ իրականացված գիտական ծրագրի վերաբերյալ հաշվետվություն չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ գիտական փորձաքննություն իրականացնող մասնագիտական փորձագիտական խորհրդի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

1.8. Մրցույթին մասնակցությունը, անկախ դրա արդյունքներից, չի խոչընդոտում մասնակցին՝ դիմելու Կոմիտեի կողմից անցկացվող այլ մրցույթներին:

1.9. Մրցույթի հայաստանյան և ռուսաստանյան կողմի անդամները միմյանց հետ համաձայնեցնում են ներկայացվող Հայտի բովանդակությունը, որը կարող է չհամընկնել՝ կախված յուրաքանչյուր կողմի առջև դրված խնդիրներից: Հայտի հայերեն և ռուսերեն անվանումները պետք է համընկնեն: Հայտը հայաստանյան կողմը ներկայացնում է Կոմիտե, իսկ ռուսաստանյան կողմը՝ ՀԴՀ:

1.10. Մրցույթին չեն կարող մասնակցել այն Հայտերը, որոնք՝

- ներկայացվել են միայն Կոմիտե կամ միայն ՀԴՀ,
- ստացվել են Հայտերի ընդունման համար հայտարարված ժամկետներից ուշ,
- չեն համապատասխանում Հրավերի պահանջներին,
- անվանմամբ և (կամ) բովանդակությամբ համընկնում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող (ֆինանսավորված) որևէ թեմայի կամ ծրագրի անվանման և (կամ) բովանդակության հետ,
- պարունակում են պետական կամ առևտրային գաղտնիք պարունակող տեղեկություններ:

1.11. Հայտի համապատասխանությունը վերը նշված պայմաններին երաշխավորում է Ղեկավարը:

2. Խմբի անդամներին ներկայացվող պահանջները

2.1. Խմբի անդամները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչներ և Ծրագրի իրականացման ընթացքում բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

2.2. Խմբում կարող են ընդգրկվել ԵՊՀ-ի գիտական/գիտամանկավարժական գործունեություն իրականացնող աշխատողները, ասպիրանտները և մագիստրանտները:

2.3. Ղեկավար կարող է լինել գիտական աստիճան ունեցող անձը, ով ունի առնվազն հինգ տարվա գիտական/գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին հինգ տարիների ընթացքում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (Thomson Reuters, Scopus և այլն), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և ԱՊՀ անդամ-պետությունների Բարձրագույն որակավորման հանձնաժողովների ցանկերում ընդգրկված գրախոսվող ամսագրերում հրատարակված առնվազն հինգ հոդված կամ երկու՝ առնվազն հինգ տպագրական մամուլ ծավալով, գիտական կազմակերպության կամ բուհի գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող և ISBN նշումով մենագրություն: Մեկ մենագրությունը համարժեք է գրախոսվող ամսագրերում հրապարակված երեք հոդվածի:

2.4. Ղեկավար չի կարող լինել այն անձը, ով գտնվում է Կատարողի վարչական ենթակայության տակ:

2.5. Ղեկավարը և Կատարողները պետք է ներգրավված լինեն միայն մեկ Հայտում:

2.6. Խմբում պետք է ընդգրկվի մինչև 35 տարեկան առնվազն մեկ գիտաշխատող կամ ասպիրանտ կամ մագիստրանտ:

2.7. Մրցույթին չեն կարող մասնակցել Կոմիտեի կողմից ֆինանսավորվող միաժամանակ երկու մրցութային (այդ թվում՝ միջազգային) թեմաների (ծրագրերի) ղեկավարները կամ կատարողները (բացառությամբ անհատական խրախուսման մրցույթների շահառուների), եթե այդ թեմաները (ծրագրերը) չեն ավարտվում մինչև Մրցույթի արդյունքում երաշխավորված Ծրագրերի ֆինանսավորման սկիզբը:

3. Ֆինանսական և այլ պայմանները

3.1. Կողմերից յուրաքանչյուրը ֆինանսավորում է իր կողմի գիտական խմբի ծախսերը:

3.2. Խմբի ֆինանսավորման առավելագույն ծավալները 12 ամիսների կտրվածքով կազմում են 3 375,0 և 4 500,0 հազար ՀՀ դրամ՝ համապատասխանաբար 3 և 4 անդամներից բաղկացած Խմբերի համար:

3.3. Աշխատանքի վարձատրության համար հատկացված առավելագույն գումարը 12 ամիսների կտրվածքով չպետք է գերազանցի 2 520,0 և 3 360,0, հազար ՀՀ դրամը՝ համապատասխանաբար երեք և չորս անդամներից բաղկացած Խմբերի համար:

3.4. «Այլ ծախսեր» հոդվածով գործուղումների համար նախատեսվող գումարը կարող է օգտագործվել ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ օտարերկրյա պետություններում գիտական միջոցառումներին մասնակցելու համար և չպետք է գերազանցի գիտական ծրագրի տարեկան ֆինանսավորման ընդհանուր գումարի 20 տոկոսը: Գործուղման նպատակը և դրա հետ կապված բոլոր ծախսերն անհրաժեշտ է հիմնավորել Ծախսերի նախահաշվի մեկնաբանություն մեջ: Մինչև 2 շաբաթ տևողությամբ գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձը հաշվարկվում են ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման հավելվածով սահմանված ծախսերի չափերի: Երկու շաբաթը գերազանցող գործուղումների համար Խմբի անդամները կարող են հայցել ամսական մինչև 1500,0 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Խմբի յուրաքանչյուր մասնակցի օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակահատվածը չպետք է գերազանցի 2 ամիսը (12 ամիսների կտրվածքով):

3.5. «Սարքեր և նյութեր» բաժնում անհրաժեշտ է ներառել գիտական հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի, սարքավորումների և գրենական պիտույքների ձեռքբերման ծախսերը: 100,0 հազար ՀՀ դրամը գերազանցող ծախսերն անհրաժեշտ է հիմնավորել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ՝ հայերենով:

3.6. Փորձարարական բնույթի Ծրագրերի համար Ծախսերի նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով կարող է նախատեսվել ենթապայմանագրային համագործակցություն, որի դեպքում Ղեկավարը իրավաբանական կամ ֆիզիկական անձի հետ կնքում է պայմանագիր և այն համաձայնեցնում Կոմիտեի նախագահի հետ: Ծախսերի

նախահաշվի մեկնաբանության մեջ յուրաքանչյուր ենթապայմանագրային համագործակցության համար անհրաժեշտ է ներկայացնել առանձին հիմնավորում:

3.7. Նախահաշվի «Վերադիր ծախսեր» հոդվածով նախատեսված ծախսերը չպետք է գերազանցեն Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով նախատեսված գումարի 7 տոկոսը:

3.8. Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» համաձայն կնքվում են պայմանագրեր Ղեկավարի և Կատարողների միջև, ինչպես նաև ԵՊՀ-ի ռեկտորի և Ղեկավարի միջև:

3.9. Կոմիտեի և Ղեկավարի միջև Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» համաձայն կնքվում է պայմանագիր՝ 1.8-րդ կետում նշված պայմանագրերի առկայության դեպքում:

3.10. Ղեկավարը ներկայացնում է ընթացիկ (տարեկան) և ամփոփիչ հաշվետվություններ՝ ըստ Ծրագրի իրականացման պայմանագրի պահանջների և ժամկետների:

3.11. 24 ամիս տևողությամբ Ծրագրի դեպքում Ծրագրի ֆինանսավորման շարունակման մասին որոշումը կայացվում է ընթացիկ (12-ամսյա) հաշվետվությունների՝ Կոմիտեի և ՀԴՀ-ի կողմից կազմակերպված փորձաքննության արդյունքների հիման վրա:

Ուշադրություն. Կախված Ծրագրի ընթացիկ (տարեկան) հաշվետվությունների արդյունքներից՝ ՀԴՀ-ի որևէ ֆինանսական աջակցության դադարեցման մասին որոշումը հիմք է Կոմիտեի կողմից այդ Ծրագրի ֆինանսավորումը դադարեցնելու համար:

3.12. Ղեկավարի Հայաստանի Հանրապետությունից երկու ամիս (60 օր) անընդմեջ բացակայության դեպքում Ծրագրի ֆինանսավորումը կդադարեցվի: Կատարողի երկու ամիս (60 օր) Հայաստանի Հանրապետությունից անընդմեջ բացակայության դեպքում Ղեկավարը 10-օրյա ժամկետում պետք է դիմի Կոմիտե՝ համարժեք փոփոխություն կատարելու կամ Կատարողների թիվը կրճատելու առաջարկությամբ: Կատարողների թվի կրճատման դեպքում Ղեկավարի և Կոմիտեի միջև կնքված պայմանագրի գինը ենթակա է փոփոխության:

3.13. Ֆինանսավորման երաշխավորված Ծրագրերի ցանկը կհրապարակվի Կոմիտեի պաշտոնական կայքում՝ www.scs.am:

4. Հայտերի ներկայացման կարգը

4.1. Հայտն անհրաժեշտ է ներկայացնել մեկական տպագիր և էլեկտրոնային (խտասկավառակ) տարբերակներով:

4.2. Հայտն անհրաժեշտ է Կոմիտե ներկայացնել Ղեկավարի գրավոր դիմումով (Հավելված N 1)՝ աշխատանքային օրերին ժամը 10:00 - 13:00 և 14:00 - 18:00, ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ:

4.3. Հայտերն ընդունվում են **2016թ. հոկտեմբերի 11-ից մինչև 2016թ. նոյեմբերի 11-ը**:

4.4. Հայտը բաղկացած է 1, 2, 3 և 4 ձևերից:

4.5. Ղեկավարի ստորագրությունը պետք է լինի ԵՊՀ գիտական քարտուղարի կամ ռեկտորի ստորագրությամբ հաստատված և կազմակերպության կնիքով վավերացված:

4.6. Հայտն անհրաժեշտ է ներկայացնել A4 ձևաչափի թղթի վրա տպված, 1.5 տողամեջ հեռավորությամբ, 12 չափի «Unicode» տառատեսակով («Sylfaen»՝ հայերեն և «Times New Roman»՝ անգլերեն ու ռուսերեն տեքստերի համար)՝ պահպանելով հայտի ձևերում առկա աղյուսակների ամբողջականությունը: Հայտի էլեկտրոնային տարբերակը պետք է ներկայացնել «Microsoft Word» ձևաչափով, մեկ ամբողջական ֆայլով, որի ծավալը չպետք է գերազանցի 4 մեգաբայթը (Mb):

4.7. Խմբի անունից հանդես է գալիս Ղեկավարը:

4.8. Կոմիտեն անցկացնում է ստացված Հայտերի տեխնիկական ստուգում: Այն Հայտերը, որոնք տեխնիկական ստուգման ընթացքում կճանաչվեն Հրավերի պահանջներին համապատասխանող, կներկայացվեն գիտական փորձաքննության:

5. Նախագծերի գիտական փորձաքննությունը

5.1. Կողմերից յուրաքանչյուրը կազմակերպում է իրեն ներկայացված Հայտերի գիտական փորձաքննությունը:

5.2. Հայտերի գնահատման նպատակով Կոմիտեի նախագահի հրամանով ձևավորվում է մասնագիտական փորձագիտական խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ):

5.3. Հայտերը տրամադրվում են Խորհրդին՝ գիտական փորձաքննությունն իրականացնելու համար:

5.4. Փորձաքննության ժամանակ գնահատվում են Հայտի գիտական և գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, գիտության տվյալ բնագավառում

Խմբի ձեռքբերումները և մասնագիտական որակավորման համապատասխանությունը, երիտասարդ (մինչև 35 տարեկան) մասնագետների ընդգրկվածությունը, նախագծի իրականացման նախադրյալները, փուլերը և ժամկետները, պահանջվող ֆինանսական միջոցների հիմնավորվածությունը և գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններով պայմանավորված այլ խնդիրներ՝ համաձայն փորձագիտական գնահատման թերթիկի (Հավելված N 4): Հայտերի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է:

5.5. Մրցույթի արդյունքում ֆինանսավորվող Ծրագրերի քանակը որոշվում է՝ հիմնվելով երկու կողմերի փորձաքննության արդյունքների վրա և ելնելով Մրցույթի համար նախատեսված յուրաքանչյուր կողմի ֆինանսական հնարավորություններից:

5.6. Կոմիտեն Ղեկավարին է տրամադրում գիտական փորձաքննության արդյունքները, որոնք ներառում են փորձագիտական եզրակացությունը, գիտական և գիտատեխնիկական գործունեության տվյալ բնագավառի/մասնագիտության համար անցողիկ շեմային գնահատականը, Խորհրդի գնահատականը, Հայտի վերջնական գնահատականը:

5.7. Մրցույթի արդյունքների բողոքարկման փուլ նախատեսված չէ:

Մրցույթի հայաստանյան կողմի պատասխանատու՝

Կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչության միջազգային համագործակցության բաժին

Հեռ.՝ 21 01 40 + 115, 21 01 40 +119

«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ԵՊՀ - ՌԴ ՀԴՀ - 2016» մրցույթին մասնակցության համար ռուսաստանյան կողմին ներկայացվող պահանջներին կարելի է ծանոթանալ **http://www.sfedu.ru/ (http://www.nauka.sfedu.ru/)** կայքից:

Անհրաժեշտ փաստաթղթերի ցուցակ

Դիմում
Տիտղոսաթերթ («Ձև 1»)
Նախագծի անոտացիա
Նախագիծ
Ղեկավարի տվյալները («Ձև 2»)
Կատարողի տվյալները («Ձև 3»)
Ծախսերի նախահաշիվ («Ձև 4»)
Ծախսերի նախահաշվի մեկնաբանություն («Ձև 4.1»)

«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ԵՊՀ – ՌԴ ՀԴՀ – 2016» ՄՐՑՈՒՅԹԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ*

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Մաթեմատիկա

1.3 Ֆիզիկա և աստղագիտություն

1.4 Քիմիա

1.6 Կենսաբանական գիտություններ

6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Պատմություն, հնագիտություն

Հավելված N 2
« ՀՀ ԿԳՆ ԳՊԿ -ԵՊՀ– ՌԴ ՀԴՀ - 2016»
միջազգային մրցույթի հրավերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անուն, հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել կից ներկայացվող հայտը՝ « ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ԵՊՀ – ՌԴ ՀԴՀ - 2016» միջազգային մրցույթին մասնակցելու համար:

Դիմող՝_____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

«____» _____ 2016 թ.

Հավելված N 3
«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ԵՊՀ– ՌԴ ՀԴՀ - 2016»
միջազգային մրցույթի հրավերի

Ձև 1

«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ -ԵՊՀ– ՌԴ ՀԴՀ - 2016» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏ

Հայտը հանձնված է «_____» _____ 2016 թ. Ծածկագիր՝ _____
(լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում)

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Հայտի
   - վերնագիրը (15 բառից ոչ ավելի՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն)

     _____

     _____
   - բնագավառը _____
   - մասնագիտական դասիչը _____
   - բնույթը (տեսական/փորձարարական)_____
2. Հուշող (բանալի) բառեր (հայերեն, ռուսերեն և անգլերեն)

   _____

   _____
3. Հայտի ղեկավարի
   - ազգանունը, անունը, հայրանունը _____
   - ծննդյան թիվը _____
   - գիտական աստիճանը _____
   - պաշտոնը _____
   - հեռախոսը _____
   - էլեկտրոնային հասցեն _____
4. Կազմակերպության լրիվ, կրճատ անվանումները,կազմակերպաիրավական ձևը և գերատեսչական պատկանելությունը_____
5. Կազմակերպության հասցեն, հեռախոսը և էլեկտրոնային հասցեն _____
6. Նախագծի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը _____ ամիս
7. Խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թիվը _____

8. Աշխատանքի վարձատրության (ներառյալ եկամտային հարկը) գումարը _____ հազար դրամ

9. Վերադիր ծախսերի գումարը _____ հազար դրամ

10. Հայցվող ընդհանուր գումարը _____ հազար դրամ

11. Հայտի ղեկավարի ստորագրությունը _____

12. ԵՊՀ-ի գիտական քարտուղարի (կամ ռեկտորի) ստորագրությունը _____

«____» _____ 2016 թ.

Կ.Տ.

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱ*

* *Համառոտ ներկայացնել նախագծի նպատակները՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:*

ՆԱԽԱԳԻԾ*

---

* *Ներկայացնել 14 էջի սահմաններում (ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը՝*

1. *8 էջի սահմաններում ներկայացնել խնդրի դրվածքը, դրա արդի վիճակը, նախագծի գիտական նպատակները, հետազոտական ծրագիրը, իրականացման եղանակները, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները,*
2. *2 էջի սահմաններում նշել տվյալ ուղղությամբ Խմբի ունեցած ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները,*
3. *2 էջի սահմաններում նկարագրել նախագծի ռուսաստանյան կողմի իրականացվելիք խնդիրները,,*
4. *Օգտագործված գրականության ցանկը:*
5. *Նախագծի ռուսերեն տեքստը ներկայացնել առանձին:*

ՂԵԿԱՎԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ*

1. Ազգանուն, անուն, հայրանուն _____
(հայերեն, ռուսերեն և անգլերեն)
2. Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը _____
3. Կրթությունը (բուհ, մասնագիտություն) _____
4. Գիտական աստիճանը _____
5. Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը և վայրը
_____
6. Հրատարակված
- գիտական հոդվածներ (թիվը) _____
- մենագրություններ (թիվը) _____
7. Արտոնագրեր (թիվը) _____
8. Վերջին 5 տարում հրատարակված գիտական հոդվածները
(նշել վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը)

1) _____
2) _____
(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

9. Նշել Կոմիտեից և այլ աղբյուրներից ստացված դրամաշնորհները

1) _____
2) _____
(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

«____» _____ 2016 թ. _____
(ղեկավարի ստորագրությունը)

* *Լրացվում է հայաստանյան և ռուսաստանյան խմբերի յուրաքանչյուր ղեկավարի համար:*

Ձև 3

ԿԱՏԱՐՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ*

Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն)	
Ազգանուն, անուն, հայրանուն (ռուսերեն)	
Ազգանուն, անուն, հայրանուն (անգլերեն)	
Ծննդյան օր/ամիս/տարի ու ծննդավայրը	
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)	
Գիտական աստիճանը	
Վերջին թեզի վերնագիրը, ծածկագիրը, մասնագիտական դասիչը, պաշտպանության տարեթիվն ու վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոսը (աշխատանքային, տան, բջջային)	
Էլեկտրոնային հասցե	
Հրատարակված գիտական հոդվածները՝ այդ թվում նախագծին առնչվող հոդվածները (նշել վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը), 5-ից ոչ ավելի	
1. 2.	

* *Լրացվում է հայաստանյան և ռուսաստանյան խմբերի յուրաքանչյուր կատարողի համար:*

Ձև 4

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայտի ծածկագիրը _____

(լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում)

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (ներառյալ եկամտային հարկ, հազար դրամ)						
	Առաջին տարի			Երկրորդ տարի		
Ազգանուն, անուն	Ամսական	Ամիսների քանակը	Պահանջվող գումարը	Ամսական	Ամիսների քանակը	Պահանջվող գումարը
1)						
2)						
3)						
4)						
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ						

ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում		
1. ՍԱՐՔԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ (թվարկել 100,0 հազար ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը, հիմնավորվել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ)	Առաջին տարի	Երկրորդ տարի
1)		
2)		
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ (հիմնավորել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ)		
1) տեղական գործուղումների տրանսպորտային ծախսեր		
2) տեղական գործուղումների օրապահիկ		
3) տեղական գործուղումների գիշերավարձ		
4) օտարերկրյա գործուղումների տրանսպորտային ծախսեր		
5) օտարերկրյա գործուղումների օրապահիկ		
6) օտարերկրյա գործուղումների գիշերավարձ		
7) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (վիզա կամ այլ վճարումներ)		
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		

3. ԵՆԹԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ (նշել ենթապայմանագրային համագործակցության բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց, համագործակցությունը մանրամասն նկարագրել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ)

Ենթապայմանագրային համագործակցության վարձավճար

	Առաջին տարի			Երկրորդ տարի		
Ազգանուն, անուն, հայրանուն	Օրավարձը	օրերի քանակը	Պահանջվող գումարը	Օրավարձը	օրերի քանակը	Պահանջվող գումարը
1)						
2)						
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ						

Ենթապայմանագրային համագործակցության նյութեր և ծառայություններ (Թվարկել 100,0 հազար ՀՀ դրամը գերազանցող բոլոր կետերը և հիմնավորել)	Առաջին տարի	Երկրորդ տարի
1)		
2)		
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		
4. ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ		
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		
ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ (ներկայացնել ֆինանսական նախահաշվի մեկնաբանության մեջ)		

Հայտի ղեկավար՝ _____ _____

(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

ԵՊՀ գլխավոր հաշվապահ՝ _____ _____

(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

Ձև 4.1

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

* Հիմնավորել Ծախսերի նախահաշվի 100,0 հազար ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը:

Հավելված N 4

«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ԵՊՀ - ՌԴ ՀԴՀ - 2016»
միջազգային մրցույթի հրավերի

Փորձագիտական գնահատման թերթիկ

Ղեկավարի ազգանունը _____ հայտ _____

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, առավելագույնը 5 միավոր **(0,5 միավորի ճշտությամբ),** հետևյալ սանդղակով.

0	*Հարցի պատասխանը **բացակայում է** կամ այն չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:*
1	***Շատ վատ:*** *Պատասխանը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:*
2	***Վատ:*** *Հարցի պատասխանը բավարար չէ նրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:*
3	***Միջին:*** *Պատասխանը ընդհանուր առմամբ բավարարում է հարցի պահանջներին, բայց կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:*
4	***Լավ:*** *Հարցի պատասխանը առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:*
5	***Գերազանց:*** *Պատասխանը լիովին համապատասխանում է հարցի պահանջներին և թերություններն աննշան են:*

Փորձագիտական գնահատում

1.	**Արդիականություն**: Որքանո՞վ է արդիական առաջարկվող հետազոտությունը:	
2.	**Նախադրյալներ:** Որքանո՞վ են բավարար ղեկավարի գիտագործնական ձեռքբերումները գիտության տվյալ բնագավառում:	
3.	**Նորույթ:** Որքանո՞վ է նոր ու հեռանկարային առաջարկվող հետազոտությունը:	
4.	**Ծրագիր:** Որքա՞ն հստակ է ձևակերպված ծրագիրը:	
5.	**Մեթոդներ և պլան:** Որքանո՞վ են նախագծի պլանը և առաջարկվող մեթոդները համապատասխանում հետազոտության նպատակների իրականացմանը:	
6.	**Արդյունք:** Որքանո՞վ են նշանակալից ակնկալվող արդյունքները՝ գիտական և գործնական տեսանկյուններից:	
7.	**Համագործակցություն:** Ի՞նչ մակարդակի վրա է գտնվում կողմերի միջև առկա համագործակցությունը (0՝ եթե համագործակցություն առկա չէ):	
8.	**Նախահաշիվ:** Որքանո՞վ են պահանջվող ֆինանսական միջոցները բավարար գիտական ծրագրի իրականացման համար:	
	Փորձագետի գնահատական (8 գնահատականների գումարը)	

Մեկնաբանություն (պարտադիր է, ծավալը չի սահմանափակվում)

_____

Փորձագետ _____ Ամսաթիվ_____

Խորհրդի գնահատում

1.	**Հայաստանյան խումբ:** Որքանո՞վ է համապատասխանում հայաստանյան կողմի ղեկավարի և կատարողների մասնագիտական որակավորումը ծրագրի իրականացմանը:	
2.	**Ռուսաստանյան խումբ:** Որքանո՞վ են համապատասխանում ռուսաստանյան կողմի ղեկավարի և կատարողների մասնագիտական որակավորումը ծրագրի իրականացմանը:	
	Խորհրդի գնահատականը (2 գնահատականների գումարը)	
	Հայտի գնահատական (Փորձագիտական գնահատականի և խորհրդի գնահատականի գումարը)	

Խորհրդի անդամ(ներ) _____

(անուն, ազգանուն) (ստորագրություն) Ամսաթիվ_____